

ԿՈԼՏԱՏԵՍՅԱԿԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՌԱՎԱԾՆ

# ԲԱՐՁՐԱԾ

ԳՅՈՒՂՂՐԱՑ

1938

ՁԵՐԵԴԱՆ

633.51 | 585

U-44 | Աղստավան Օ.

Բայրութ. | 1936.

# ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

633.5

U - 4

ԱՀԱՐԴԱՐԱ 1981

## Գ. ԱՂԱՋԱՑԱՆ

# F U F U 4

۲۵۹۶

A 18433



ԳՅՈՒՂՂԱՔ

1936

ԳԵՐԵՎԱՆ

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բամբակի բերքատվության առաջավորների խորհրդակցությունը կուսակցության ու կառավարության ղեկավարների հետ ցուցադրեց այն հսկայական հաջողությունները, վորոնք ձեռք են բերվել մեր Միության բամբակի դաշտերում։

Այդ խորհրդակցության մասնակցողները պատմեցին վողջերկրին, թե նրանք ինչպես են ձեռք բերել այդ հսկայական հաջողությունները բամբակի բերքատվության բարձրացման գործում։ Այդ խորհրդակցությունը հանդես բերեց ականավոր ստախանովականներ — բարձր բերքի ու բարձր տեխնիկայի իսկական վարպետներ, վորոնք առաջատար դեր են կատարել, Այնպիսի հերոս-բամբակագործներ, ինչպիսիք են Մատյանուրովկովովովային մասսաների լավագույն կազմակերպիչը բարձր բերքի համար մղվող պայքարում, Միրզայեվը, Ասքարովը, Թուրայեվա Տաջիխանը, վոր որական հավաքում ե 150 կգ բամբակի հումք, Սահրովը, վոր հեկտարից տալիս ե 54 գ, Ֆեյզուլա Յուսուլովը, վոր հեկտարից տալիս ե 57 գ, բամբակ՝ իր ողակովայս հերոսներն առաջավորների մակարդակին են հասցնում հետմացող կոլտնտեսությունները։

Առավելագույն բերք ստանալու համար կուսակցությունն ու կառավարությունն ստեղծել և ստեղծում են բոլոր պայմանները, կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների կարևորագույն խնդիրնե, հենվելով առաջավորների փորձի վրա, վորոնք հասել են յեղած հնարավորությունների լավագույն ոգտագործմանը՝ շարժման մեջ նել բերքատվության բարձրացման բոլոր լծակները և լիուղին ոգտագործել մեզ մոտ յեղած հսկայական ռեզերվները վ100% ով աշնանավար անելլ, բամբակի խառնթյան հարցի լու-

ծումը, ճիշտ վրաբռումը, հանքային և տեղական պարաբռանյութերի ճիշտ ոգտագործումը, հողի ու ցանքի մշակման մեխանիզմների լավագույն ոգտագործումը, սերմացվի գործի բարելավումը, կնգուղների կշռի մեծացումը, թելի վորակի բարելավումը և այլն):

Պլանի համաձայն, նախատեսված է 1936 թ. ստանալ 40 միլիոն փութ բամբակի թել՝ 1935 թ. 33 միլիոնի և 1934 թ. 23,200,000-ի փոխարեն: «Այդ ռեսուրսների ճիշտ ոգտագործումը մեզ հնարավորություն կտա գալ տարի անպայման տալ 40 միլիոն փթից վոչ պակաս», — ասել ե ընկ. Զերնովը բերքատվության առաջավորների խորհրդակցության ժամանակ ունեցած իր յելույթում:

Հայաստանի պայմաններում բամբակի բերքատվության բարձագնացման գործում, մի շարք այլ ձեռնարկութերին ղուղղնթաց, շատ խոշոր նշանակություն ունեն ազգութեանի կական բնույթի հարցերը, վորոնց մասին շատ համառոտ ձևով պատմվում ե այս գրքույկում:

---

## ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական անտեսության բոլոր բնագավառներում բամբակը դործադրվում է հսկայական քանակությամբ և բռնում է առաջին տեղը մշտակվող այլ թելատու բուլսերի շարքում։ Նրա թելից պատրաստում են բազմապիսի և իր վորակով բարձր դործվածքներ, սերմերից ստանում են միլիոնավոր առնների հասնող բուսական յուղ, վորը դործադրվում է և սննդի, և այլ նպատակների համար։ Նրանից ստացված քուսպը շատ արժեքավոր խտացրած կեր և անասունների համար։ Բույսի նացած մասերը և ոգտագործվում են զանազան նպատակներով։

Մեզ մոտ մշտակվող, ինչպես նաև ընդհանրապես մշտակության մեջ դանվող բամբակի բոլոր տեսակները միամյա թփեր են, վորոնց բարձրությունը՝ նորմալ դարդացման դեպքում՝ լինում է 0,5 մետրից մինչև 1—1,5 մետր։

Բամբակի սերմը, առանց թելի, բաղկացած և սպամից և թաղանթից, վորը լինում է ներքին և արտաքին թաղանթի ներքին մասը բարակ և, իսկ արտաքինը՝ հաստ և փայտացած։ Սազմնիր հերթին բաղկացած է շաքիլներից և արմատիկից։ Բացի դրանից, մեզ մոտ մշտակվող սորտերի սերմն իր մակերեսի վրա ունենում է յերկու կարգի թելեր—յերկար և կարճ։ Այդ կարճ թելերը կարելի յե հեռացնել միայն լինաերովկալի միջոցով։

Սերմը խանագության և ջերմության ոպտիմալ (լավագույն) պայմաններում ծլում է 5—7 որում։ Ծիլերն սկզբում լինում են դեղին, սակայն շատ արադ կերպով հողից դուրս լեկած շաքիլները կանաչ գույն են ընդունում։

Ցանքից մոտ 15—20 որ հետո շաքիլների արանքից դուրս և դալիս բամբակի առաջին՝ իսկական տերեր, դրանից մոտ 5—8

որ հետո դուքս և գալիս շըրդ տերևը և այդպես՝ անընդհատ վորքան յեղանակն ավելի տաք և լինում և զարդացման պայմաններն ել լավ, այնքան տերևներն ել ավելի շուտ են դուքս գալիս (2—3 որ մեկը մյուսից ճետո):

Ցանքից մոտ 30—40 որ հետո, յերբ բամբակն ունենում է մոտավորապես 5—8 տերև, կարելի յի տեսնել բամբակի ապագա ճյուղերը, վորոնք դուքս են գալիս տերևների անութներից (ծոցերից): Հետագայում ջատ հեշտ կարելի լի նկատել, վոր բամբակի ճյուղերը լինում են յերկու տեսակի՝ պտղատու (կամ սիմպոդիալ) և աճման (կամ մոնոպոդիալ):

Պտղատու ճյուղերի վրա կնգուղները նստած են լինում անմիջականորեն: Այդ ճյուղերը տալիս են գլխավորապես պտղատու բողբոջներ, իսկ մոնոպոդիալները՝ տերևներին բողբոջներ: Վաղահաս սորտերի պտղատու ճյուղերը դուքս են դալիս ավելի ցած գտնվող տերևների անութներից, քան թե ուշահաս սորտերինը: Վորքան սորտը ջատ և շուտ պտղատու ճյուղեր տա, այնքան լավ:

Բամբակի ծաղիկներն ունեն յերեք ծաղկակից, թույլ զարդացած բաժակ՝ և հինգ պսակաթերթիկից բաղկացած ոլսակ: Առեջքները հիմքում կպած են միմյանց և կազմում են խողովակ, վարսանդը փետրաձև սպի ունի: Սերմնարանն ունի 3—5 բուն, թերթեմն այդ բների թիվը ավելի չե լինում: Բամբակի ծաղիկները բացվում են առավոտյան և ապրում են միայն մեկ որ: Պտուղը (կնգուղը) բաղկացած ե 3—5 բնից և ամեն մեկ բնում կա 5—7 սերմ: Այդ բների թիվը լերթեմն ավելի լինում: Սերմերը լինում են մերկ և թելերով ծածկված:

Հասունանալիս աներիկական տեսակների կնգուղների բաժանմունքները («ղանադները») բացվում են ավելի ուժեղ, քան թե աֆրիկական սորտերի կնգուղների բաժանմունքները: Վորոշ սորտերի մոտ կնգուղների ուժեղ բացվելու հետևանքով քամիններից և այլ պատճառներից նրանց մեջ յեղած բամբակը թափվում ե: Սակայն թե աֆրիկական և թե ամերիկական տեսակների մեջ կան այնպիսի սորտեր, վորոնց կնգուղները բացվում են թույլ, և բամբակը չի թափվում:

Բամբակենին ունենում ե գլխավոր և նըսնից զանազան ուղղություններով դնացած յերկրորդական արմատներ։ Հողում այդ արմատները կաղթում են խիտ ցանց և շտա լավ ոգտագործում են հողի մեջ յեղած ջուրը և սննդանլութերը։ Փուխը հողեմում բամբակենու արմատները թափանցում են մինչև 1—1,5 մետր և դրանից ել ավելի խոր։

## ԲԱՄԲԱԿԻ ՊԱՇԱՆՁԵ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ

Բամբակը մեծ ջերմություն պահանջող բռւյս ե և 0 աստիճանի դեպքում ցրտահարվում ու մեռնում ե։ Յերբ ջերմությունը 17—20 աստիճանից պակաս ե, ապա նրա աճեցողությունը դանդաղում ե, իսկ դրանից ավելի պակաս լինելու դեպքում՝ այն բոլորովին կանգ ե առնում ( $10^{\circ}$ — $14^{\circ}$ -ից պակաս լինելու դեպքում)։ Շատ բարձր ջերմությունը ևս լավ չի ազդում բամբակի զարգացման վրա, վորովհետեւ այդ դեպքում դադարում ե նրա սննդառությունը և կանգ ե առնում բռւյսի աճը։

Բամբակի ամենալավ կամ ոպտիմալ ջերմությունը համարվում ե 25—32 աստիճանը (8ելսիուսով)։

Լույսը նույնպես շատ կարևոր պայման է բամբակի զարգացման համար։ Ամերիկացիք բամբակին անվանում են արեգակի պալվակ։ Նա չի դիմանում յերկարատեւ շվաքին։ Ամպամած և խոնագ պայմանները լավ չեն բամբակի համար, առանձնապես՝ ծաղկման և պտղաբերության շրջանում, վորովհետեւ դրանից ծաղկելներն ուժեղ կերպով թափվում են։

Լույսի ռեժիմը կարելի յե կանոնավորել համապատասխան միջարքային և միջրնային տարածություններ ընտրելու միջոցով։

Բամբակի պտղաբերության վրա ամենից ուժեղ ազդեցություն է ունենում հողի ջրային ռեժիմը։ Ջուրը վճռական նշանակություն ունի առանձնապես բամբակի պտղաբերության վրա, ըստ վորում ջրի պակասը, ինչպես և ավելցուկը պատճառ են դառնում կոկոնների և ծաղիկների ուժեղ վիժման։ Ջրային ռեժիմը կա-

նոնավորելով՝ մենք զդալիորեն կարող ենք կանոնավորել բամբակի զարգացման տեմպն ու դորությունը, ծաղկելու և պտղաբերելու շրջանների տևողությունը և հասունացումը, մի հանդամանք, վոր մեր պայմաններում ունի մեծ նշանակություն բերքի բարձրացման տեսակետից:

Բամբակի զարգացման համար մեծ դեք ունեն նաև հողի մեջ դտնված ողը և սննդանյութերը։ Խոշոր ե նաև հողի ֆիզիկական հատկությունների նշանակությունը։ Այդ բոլորի մասին խոսվում է դրաւեկի համապատասխան բաժիններում։

## ԲԱՄԲԱԿԻ ՍՈՐՏԵՐԸ

Բամբակի վեգետացիայի արագացումը մեր պայմաններում խոշոր նշանակություն ունի, վորովհետև վեգետացիայի շրջանը մեզ մոտ համեմատաբար կարճ է, և շատ հաճախ աշնան ցըսերն սպանելով բամբակենուն՝ զրկում են մեզ բերքի մեծ մասից։ Ամեն մի միջոց, վոր կարող է արագացնել բամբակի վեգետացիան՝ առանց խախտելու նրա նորմալ զարգացման պրոցեսները, մեծապես կնպաստի բամբակի բերքի բարձրացմանը։ Այդ տեսակետից, աղբոտեխնիկական մի շարք կարեոր ձեռնտրեկութերից բացի, մեծ նշանակություն ունի բամբակի սելեկցիան, վորի միջոցավարդեն ստացվել են մի շարք վաղահաս և միաժամանակ բարձր ու լավորակ բերք տվող սորտեր։ Այդ սորտերը մշակվում են այժմ մեր Միության բամբակացան աարբեր շրջաններում։ Նկարագրենք դրանցից մի քանիսը։

### 1-ին խումբ—Խիստ վաղահաս սորտեր

1. Երեսեր կամ № 1306.—Ամերիկական տեսակի բամբակ է, ստացվել ե՞թուքեստանի սելեկցիոն կայանում 1920—1921 թվին՝ պրոֆեսոր Շընդերի կողմից՝ «կինդ» սորտից։ Թուփը ցածրահասէ, կոմպակտ է։ Պտղատու ձյուղերը կարճ են, կնդուղները՝ խիստ փոքր, կլորավուն, սովորաբար 4—5 բնանի։ Կնդուղի մակերեսը հարթ է, հասունանալիս բաժանմունքները բացվում են

ռեժիսոր, և բամբակը թափվում եւ Կնգուղի մեջ յեղած բամբակի միջին կշիռը՝ 3,5 դրամ եւ Սերմերը շատ մանր են—1000 հատը կշռում ե 90—100 գրամ։

Վեգետացիոն շրջանը տևում է 109—127 որ (միջինը՝ 119 որ)։ Մշակվում է կարճ վեգետացիա ունեցող շրջաններում։ Հայատանում այդ սորտն այժմ չի մշակվում, այլ մշակվում եր սըանից 2 տարի առաջ։

Թելի յերկարությունն է 25/26 մմ-ից մինչև 28/29 մմ։ Այդ տատանումները պայմանավորված են լինում շրջանի կլիմայական և այլ պայմաններով, մշակման լեզանակներով, սեղոնակին յերեւլութների ազդեցությամբ։

Թելի միջին լեն է 31,5%՝ վորը թված պայմանների ազդեցության տակ տատանվում է 30—32,5%-ի միջև։

2. № 915։ Ստացվել է Անդրկովկասյան գիտահետազոտական Բամբակագործական Խոստիտուտում (Զակնիսի)՝ 1928 թվին, անհատական ընտքության միջոցով, «Կինդ-Ղարայազի» պոպուլյացիայից։

Ամերիկական տեսակի բամբակ եւ թուփն ունի միջին բարձրություն, լավ տերևակալած եւ ծողուն ամուր ե, մազմզուկներով խիտ պատված։ Պտղատու ճյուղերը բավականաչափ յերկար են, ծնկածեւ, Տերևները մանր են, 3—5 բլթականի, մուգ-կանաչ գույնի։ Ծաղիկը լավ բացվող ե, պսակաթերթիկները բաց կը եմի գույն ունեն, կնգուղն ունի միջին մեծություն, 4—5 բաժանմունք, քիչ կլորավուն ե, ունի լեզրավոր փոքր քիթ։

Կնգուղի մեջ յեղած բամբակի միջին կշիռը 4,3—5,2 գրամ է, կնգուղի բացվելուց հետո բամբակը չի թափվում և լավ է պահպատճեց։

Սերմերը մանր են, աղվանազով խիտ ծածկված։ 1000 սերմը կշռում է 106—126 գրամ։

Վեգետացիալի շրջանը տևում է 112—128 որ (միջինը 121 որ)։

Թելի յերկարությունը տատանվում է 26/27—28/29 մմ միջև։ Թելի միջին լեռ հավասար է 36%-ի, վորը տատանվում է 34,3—37,2% միջև։

Մշակվում ե կարճ վեգետացիա ունեցող շրջաններում: Խորհրդական հայաստանում մշակվում ե մեծ չափերով:

## 2-րդ խումբ—Վաղահաս սուրե

1. Սուր № 114.—Ամերիկական տեսակի բամբակ ե, ստացվել ե Անդրկովկասյան Գիտահետազոտական Բամբակագործական ինստիտուտում (Զակնիխի)՝ 1929 թվին, անհատական ընտրության մեթոդով՝ թուրքեստանի սելեկցիոն կայանի № 169 սորտից: Թուփը ցանցառ է, մազմղուկներով ծածկված ե թուլ կերպով: Ցողունը բարակ ե, բարձր, վոչ բավականաչափ ամուր: Պտղատու ճյուղերը յերկար են՝ բարակ, լերկար միջնագույշներով: Տերևներն ունեն միջին մեծություն, 5 բլթականի յեն, քիչ մազմղուկներ ունեն և ինտենսիվ կանաչ գույն: Ծաղիկը միջին մեծության ե, պսակաթերթիկները՝ բաց-կըսմի գույնի: Ենգուղը միջին մեծություն ունի, կլորավուն ե, փոքր լեզրավոր քթով, կշռում է 4,3—4,8 գրամ: Բացվելիս բամբակը կնգուղի մեջ լավ ե պահպում և չի թափվում: Սերմերը մանր են, ունեն աղվամազ, 1000 հատի կշիռը 98—112 գրամ ե: Վեգետացիոն շրջանի տեղությունը տատանվում է 115—133 որի միջև (միջինը 125 որ):

Թելի յերկարությունը տատանվում է 27/28—30/31 մմ միջև: Թելի լելը կազմում է 34% (32,5—35,3%):

Մշակվում ե Ռեզրեկստանի, թուրքմենստանի, Տաջիկստանի, Կարա-Կալպակիայի և Աղրբեջանի վորոշ շրջաններում:

Վաղահասների խմբին են պատկանում նաև № 2017 (Կիմ), № 169 (Դեխիկան) և ուրիշ սորտեր, վորոնց նկարագրությունը չենք տալիս:

## 3-րդ խումբ—Միջին հասունության սուրե

1. Սուր № 246.—Ամերիկական տեսակի բամբակ ե, ստացվել ե Անդրկովկասյան Գիտահետազոտական Բամբակագործական ինստիտուտում՝ անհատական ընտրության միջոցով, 1928 թվին:

թուփը բարձր ե, ամուր, հիմքում՝ բավականաշափ հաստ  
պառկելու վոչ արամադիր: Անտոցիանով ներկված ե շատ թույլ,  
մաղերով ծածկված ե միջին չափով, միջիանգույցները յերկարա-  
ցած են:

Մոնոպոդիալ ճյուղերը չեն զարգանում: Սիմպոդիալ ճյու-  
ղերը յերկար են, ունեն յերկար միջիանգույցներ, գլխավոր ցո-  
զունի հետ կազմում են ուղիղ անկյուն:

Տերևները խոշոր են, 5 բլթականի, թեթև կտրտված, բաց-  
կանաչ գույնի, թիթեղը հորիզոնական է:

Ծաղիկը միջին մեծության է: Պսակաթերթերը բաց կրեմի  
գույն ունեն, ծաղիկները միջին մեծության են:

Կնգուզները միջին մեծության են, ունեն խիստ յերկարա-  
ցած սուր քիթ, վորը համարյա միշտ թեքված ե լինում դեպի  
կողքը: Մեծ մասամբ բաժանմունքները լինում են 4, տատան-  
վելով 3—5 միջև: Կնգուղի մեջ յեղած բամբակի քաշը տատան-  
վում է 4—5 գրամի միջև: Բացվելիս բամբակը լավ ե պահպում  
և կնգուղի միջից չի թափվում:

Սերմերը խոշոր են, ծածկված են կարճ և թանձր աղվամա-  
զով, 1000 հատը կշռում է 120—146 գրամ:

Վեգետացիոն շրջանը տևում է 117—132 որ (միջինը 127  
որ): Պատկանում է միջանաս սորտերի խմբին:

Թելի յերկարությունը հասնում է 27/28—31/32 մմ: Թելի  
յելը կազմում է 33,8%/<sub>0</sub>, տատանվելով 31—35%/<sub>0</sub>-ի միջև:

Բամբակի այս խմբին են պատկանում նաև № 8196 (Ռւզուն)  
№ 2034 (Բոլցելիկ), № 278 սորտերը, վորոնց նկարագրությունը  
չենք տալիս:

Այս խմբի բամբակները մշակվում են Միության մի շարք  
շրջաններում: Հայաստանում մեծ չափերով մշակվում է 246 սոր-  
տը: Թուացածները մեղ մոտ չեն մշակվում:

#### 4-րդ խումբ—Միջին-ուշահաս սորտեր

Այս խմբին են պատկանում Նավրոցկին, № 8517 (Կոլյուզ-  
նիկ), № 491, վորոնց նկարագրությունը չենք բերում: Դրանցից  
մեզ մոտ մինչև վերջին տարիները մշակվել ե միայն Նավրոցկի  
սորտը:

## 5-րդ խումբ—Ռւսահասներ

Ռւզահաս բամբակներից են՝ № 36 Ա-2 (Գախտակոր), № 3427 (Թուրքմեն), Տրիումֆ-Նավբոցկի, վորոնջ մշակվում են յերկար վեղետացիա ունեցող շրջաններում։ Այս խմբի բամբակներից մեզ մոտ և վոչ մեկը չեւ մշակվում։

Յեղիտպական բամբակներից են՝ Պիմա, Մաարադ, Ֆուադի և ուրիշները, վորոնջ նույն պես մշակվում են եւ. Միության մեջ յերկար վեղետացիա ունեցող շրջաններում։

Այսպիսով, մեզ մոտ մշակվում են ամերիկական բամբակի 2 սորտեր՝ 915 և 246, վորոնց նկարագրությունը տրվեց ավելի մանրամամոնորեն։

## ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ

Եկը բամբակացան շրջաններում բամբակը կարող է աճել համարյա բռլոր տեսակի հողերում։ Անձրաժեշտ ե միայն, վոր այդ հողերը ճահճացած և աղուտ չլինեն։ Բամբակի մքակության համար գերադասելի յեն համեմատաբար թեթև և փուխր հողերը, սակայն ծանր հողերում ևս հնարավոր ե հաջողությամբ բամբակ մշակել և լավ բերք ստանալ, միայն դրա համար նախքան ցանքն անհրաժեշտ ե տանել ուժեղ նախապատրաստական աշխատանք և հետազում ել կատարել հաճախակի մշակություն։ Նման հողերի ֆիզիկական կազմը լավացնելու համար շատ ուղարկետ ե նրանց մեջ ավելացնել ավաղով հարուստ հող։ Այդպիսի աշխատանքներ կատարում են նաև մեզ մոտ, վորը կարեւոր նշանակություն ունի բերքատվության բարձրացման գործում և արժանի յեւ խրախուսանքի։

Շատ ուժեղ և խիստ պարարտացրած հողերն անհրաժեշտ ե հատկացնել վաղահաս սորտերի մշակությանը։ Ցանքաշրջանառության մեջ կուլտուրաներն առանձին դաշտերի միջև բաշխելիս այնուես պետք ե անել, վոր սկզբնական շրջանում բամբակի տակ դրվեն ամենից բերքի հողերը բացի դրանից, կարեւոր միջոցառում ե հողերը նախքան ցանքը կուլտուրական վիճակի բերելը

և ցանքի համար նախապատրաստելը։ Դրա համար անհրաժեշտ է հողերի միջից հեռացնել նախկին թե կուլտուրական և թե վայրի բուսականության բոլոր մնացորդները (ծառերի բուն, արմատներ, բամբակի ցողուններ և արմատներ) և քարերը։ Այն դեպքերում, յերբ դանդուրդանն ու չայիրը համատարած կերպով չեն բռնում ամբողջ տարածությունը, այլ դաշտը վարակում են առանձին բծերով, ապա անհրաժեշտ է նախքան վարելը դրանք հողից արմատախիլ անել, դաշտից հեռացնել և այրել։ Հողն ամբողջապես վարակված լինելու դեպքում անհրաժեշտ է յօւրաքանչյուր անգամ վար կամ կրկնավար կատարելիս կոճղարմատները հագաքել վոչ թե վարից հետո, այլ վարին զուղընթաց, հենց ակոսներում և այն հաշվով, վոր հաջորդ ակոսի հողը չծածկի նախորդ ակոսում յեղած կոճղարմատները։

Անհրաժեշտ է նաև վերացնել միջնակները, ավելորդ առուներն ու թմրերը, խամ՝ անմշակ մնացած հողակտորները, վորանք հետադայում ծածկվում են մոլախոտերով և հիվանդությունների ու վնասատուների տարածման ոջախ հանդիսանում։ Այդ բոլորք քանդելուց հետո պիտի հարթել բոլոր փռերը, խորդուբորդությունները, քանդած առուների, թմրերի և միջնակների տեղերը, վորոնք արգելակում են մեքենաների անխափան աշխատանքը և բարձրացնում պարապուրդների չափը։

## ԱՇԽԱՍՎԱՐԸ

Աշխանից վարած հողերում ավելի լրիդ են կուտակվում ձըմրան և վաղ զարնան մթնոլորտային տեղութերը։ Բացի դրանից, աշխանավարը նպաստում է հողի մեջ յեղած սննդանյութերի քայքայման և միջատների ու մոլախոտերի վորոշ մասի վոչնշացման։ Վերջապես աշխան վարի հետևանքով, ցրտի և այլ գործոնների աղղեցության տակ հողի սարուկառուբայի լույսացման պրոցեսն ավելի լավ, ավելի արագ է կատարվում։ Կարևոր են նաև այն, վոր աշխանավարը թեթևացնում և զարնան աշխատանքների լարվածությունը՝ վարի, ցանքի և ծլաջրի շրջանում, հնարավորություն և տալիս տվելի խնամքով և ժամանակին սկսել ու վերջացնել

բամբակի վարն ու ցանքը, հետևապես հեշտացնում է նաև խնամքի հետագա աշխատանքները, գորովհետև այդ պայմաններում բամբակը զարգանում է ուժեղ, իսկ մոլախոտերը՝ թույլ։ Այս բոլորից պարզ է, վոր թե բամբակին և թե գարնանացան այլ կուլտուրաներին հատկացված հողերը պետք են անպայմանորեն վաշել աշնանից, ըստ վորում բամբակի տակ յեղած հողամասերը պետք են վաշել անմիջապես՝ բամբակի վերջին բերքահավաքը վերջացնելուց հետո։ Հացահատիկների տակ յեղած հողերը պիտի ըերքահավաքը վերջացնելուց անմիջապես հետո խողանավարել 12—14 մմ խորությամբ, իսկ վաղ աշնանը կատարել խոր վար։ Այդ յերկու վարն անհրաժեշտ են մոլախոտերի դեմ ավելի լավ պակագարելու և հողում միկրոբիոլոգիական պրոցեսներն ավելի ուժեղացնելու տեսակետից։ Առվույտի տակ յեղած հողերի վարը և պիտի կատարել աշնանը։

Այդ բոլոր դեպքերում ել աշնան վարից հետո հողը չպիտի փոցխել վորովհետև ստացված խորդուրոդությունն ավելի է նպաստում մթնոլորտային տեղումների լուրացմանը և ձմեռն ել հողն ավելի ուժեղ ենթարկվում ցրտի ազդեցությանը։

Փորձերը և կոլտնտեսականների դիտողությունները ցույց են տվել, վոր աշնանավաքը վորքան շուտ կատարվի, այնքան ել նրա դերը բերքի բարձրացման խնդրում ավելի մեծ կլինի, ուստի այն բոլոր դեպքերում, յերբ հնարավոր են այդ վարը շուտ կատարել, պետք են անհապաղ սկսել և վոչ մի դեպքում չհետաձգել մինչեւ ուշ աշուն։

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Դարնանն առաջին հերթին անհրաժեշտ է վարել այն հողերը, վորոնք աշնանից վարած չեն, ըստ վորում վարը պետք են սկսել վաղ, հենց վոր հնարավոր յեղավ դաշտ դուրս գալ և հողային աշխատանքներն սկսել։ Վարի ժամանակ խիստ հաշվի պիտի առնել հողերի առանձնահատկությունները և վոչ մի դեպքում չպիտի թույլ տալ վոչ ցխվար և վոչ ել ուշացրած վար։ Ծանր, հզոր վարելաշերտ ունեցող, զանդուրդանով և այլ կոճ-

Ղարմատավոր մոլախոտերով վարակված հողերը պիտի վարել 22—24 սմ խորությամբ, իսկ թեթև, ավագով հարուսո, փռքը վարելաշերտ ունեցող և մոլախոտերից մաքուր հողերում վարի խորությունը պիտի լինի 18—22 սմ (նայած հողերի առանձնահատկություններին):

Առաջին տիպի հողերում անհրաժեշտ է մինչև ցանքը մի անգամ ևս կատարել խոր վար, ապա կրկնավար՝ 14—15 սմ խորությամբ և ճետո ցանք, իսկ լեռկրորդ տիպի հողերում պետք է բավականանալ միայն կրկնավարով։ Յուրաքանչյուր անգամ թե վարելիս և թե կրկնավարելիս անմիջապես, ճենց ակոսների մեջ պիտի հավաքել մոլախոտերի մնացորդները և իսկույն փոցխել։ Փոցխել անհրաժեշտ ե 2 անգամ՝ մեկը մյոււխին հակառակ ուղղութլամբ։ Ղանդուրդանի և չայերի կոճղարմատները պիտի հավաքել նաև փոցխից ճետո։

Աշնանը վարած հողամասերի գարնանային խոր վարը պիտի կատարել անմիջապես, ճենց վոր վերջանա աշնանից չվարած հողերի առաջին վարը։ Բացի դրանից, այդ հողերում պիտի կատարել նաև կրկնավար՝ ցանքից առաջ։

Պիտի խիստ ճետներ, վոր թե վարը և թե կրկնավարն արտի ըռը մասերում կատարվեն միահավասար խորությամբ և առանց խարակների։ Միատեսակ վար պիտի կատարել նաև անկյուններում գլխավար տալու ժամանակ։

Արաթ ստացող հողի գարնանավարն անհրաժեշտ ե կատարել ցանքից առնվազն 20—30 որ առաջ (տարբեր հողերում այդ տևողությունը լինելու յի տարբեր), իսկ աշնանից վարած հողամասերում նախ պիտի կատարել կրկնավար՝ 8—10 սմ խորությամբ, ապա արաթ, ճետո նորից կրկնավար և ցանք։

Արաթի համար պիտի ընտրել ավելի հարթ ռելեֆ ունեցող հողամասերը, վորովհետև թեք ռելիֆ ունեցող դաշտերում հողի անհրաժեշտ խոնավացում չի կատարվում և արաթն սպասվող եքեկտ չի տալիս։ Արաթը պետք ե կատարել այնպես, վոր ջուրը հավասարապես տարածվի դաշտում և հողի հավասար խոնավացում կատարվի։ Բացի դրանից, արաթ պետք ե անել լավ խոնավունակ և դանդաղ չորացող հողերում, վորովհետև արագ չու

ըացող հոգեբում սերմերի ծլելու համար հոգի վերին շերտում անհրաժեշտ քանակությամբ ջուր չի լինում, նրանց մի մասը չի ծլում և ստացվում են նոսր, վատորակ ցանք:

Թեք, խոնավություն վատ պահող, ջրելուց հետո արագ չորացող հողամասերում անհրաժեշտ ե կատարել ծլաջուր:

Նախքան արաթ սկսելը, բրիգադիլն ազբոնումի հետ միասին պետք ե շրջի արաթի յենթակա բոլոր հողամասերը և առանձին հողակտոբների համար սահմանի արաթի առանձին ժամանակ, չելնելով այն հիմնական սկզբունքից, վոր արաթը պետք է կատարել այն հաշվով, վորպեսզի հողի քեշը դա ցանքի ճիշտ ժամանակին, վորը պիտի վորոշված լինի նախորոք: Այն դեպքերում, յերբ հողամասի առանձին մասերը, անհավասար թեքություն ունենալու պատճառով, միաժամանակ քեշի չեն դալիս, չպետք է սպասել, վորպեսզի մյուս մասերը ևս քեշի դան, այլ անհրաժեշտ ե այդ քեշի յեկած ժամանել փոցխել: Հողի քեշը գալուն պես իսկույն պիտի կատարել կրկնավար՝ 8—10 սմ խորությամբ, առանց առը շուրջ տալու, և անմիջապես փոցխել ու ցանել: Այն դեպքերում, յերբ վտանգ կա, վոր կրկնավարը կարող է ուշանալ, անհրաժեշտ ե արաթան ամբողջ տրաը փոցխել նախքան այդ կրկնավարը: Արաթի համար նախորոք պիտի պատրաստել մարգեր, կորիներ կամ ակոսներ: Արաթի վերջին ժամկետը սահմանել մայիսի 5-ը, վորից հետո պիտի կատարել ծլաջուր:

Մարգերը, ակոսներն անհրաժեշտ ե դցել լարի միջոցով և ուղիղ, վորպեսզի հետագայում բամբակի շարքերը ևս ուղիղ լինեն: Մարգերի լայնությունը պետք է խստորեն դիմերենցիացիայի լենթարկել. հաշվի պետք է առնել թե աշխատանքների մեխանիզացիան և թե հոգերի առանձնահատկությունները: Տրակտորացին մշտական համելացված հողամասերում մարգերի լունությունը և միջարքային տարածությունները պիտի հարմարեցնել տրակտորացին կուլտիվացիալին: Մարգում շարքերի թիվը տրաբեր գեղղերում կարող է տատանվել 3—8-ի միջև:

Մարգոցելուց հետո մարգերի մեջ հողն անհրաժեշտ է հավասարեցնել: Այդ աշխատանքը կարելի յև կատարել և՛ բահով, և քեթմեններով, և՛ զեղզագ փոցխով:

## ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄ

Մեր բամբակացան շրջանների հողերն առանձնապես կարիք են զգում ազոտական պարարտանյութերի, իրենց եֆեկտի առակետից 2-րդ տեղն են բոնում ֆոսֆորական պարարտանյութերը։ Անհամեմատ ավելի լավ արդյունք եւ ստացվում այն դեպքում, յերբ հողին արվում եւ ազոտական և ֆոսֆորական պարարտանյութերի խառնուրդ։ Այդ դեպքում ըույսերի վեգետացիան միակողմանի պարարտացման հետևանքով չի յերկարում և բերքն ել բարձր եւ լինում թե վորակապես և թե քանակապես։

Հանքային պարարտացում կատարելիս խիստ հաշվի պիտի առնել հողի առանձնահատկությունները, նրա պատմությունը, վարակվածությունը մոլախոտերով, ըստ վորում նախ և առաջ անհրաժեշտ եւ պարարտացնել այն հողերը, վորոնք մոլախոտերով ուժեղ վարակված չեն, ամրող վեգետացիայի ընթացքում ապահովված են ջրով և նախորդ տարիներում չեն պարաբռացվել։ Առվույտի աեղերը և չիմանները պիտի պարարտացնել մասնակիորեն և այն ել սկսած բամբակի մշակման 2-րդ տարուց։ Այն դեպքում, յերբ պարարտացվում եւ նախորդ տարում պարարտացրած, բայց թույլ եւ պակաս բերքատվություն ունեցող հող, պարարտանյութի դոզան պետք եւ պակաս լինի։ Մօլախոտերով ուժեղ վարակված հողեր պարարտացնելիս պետք եւ քաղնանի աշխատանքները կատարել հաճախակի և մեծ խնամքով, այլ կերպ՝ պարարտացումից կստացվի վոչ ցանկալի արդյունք։ Զինու և չիման հողերը պետք եւ պարարտացնել ֆոսֆորական պարարտանյութերով, վորի դոզաները յուրաքանչյուր անգամ պիտի վորոշվեն շրջանի ագրոպերսոնալի կողմից։ Բոլորովին չպետք եւ պարարտացնել ճահճացած և աղիացած հողերը։

Պարարտանյութերը հող մտցնելուց առաջ պետք եւ մանրացնել և հողի մեջ մտցնել իրեն խառնուրդ։

Կալիական աղերը, ամոնիում սուլֆատը և քումաքը կարելի յեւ սուլփերֆոսֆատի հետ խառնել հողը մացնելուց 10—15 օր առաջ, իսկ ամոնյակային սելիտրան և լեյնասելիտրան՝ հողը մտցնելուց անմիջապես առաջ և իսկույն հողի մեջ մացնել։ Այդ

իսահնութեղն առանց հողի մեջ մտցնելու չոլետք եւ պահել նույնիսկ մի ոք:

Պարաբուտանյութերը հողի մեջ պետք եւ մտցնել աշնանը՝ սրտահերկից առաջ, կամ վաղ գարնանը՝ առաջին խոր վարից առաջ, իսկ յեթե պարարտա նյութն ստացվել եւ այդ վարից հետո, ապա պիտի մտցնել հետագա կրկնավարերից առաջ։ Յերբ պարարտանյութն ուշ ստանալու պատճտուիլ պարաբուտացում կատարվում եւ ցանքից անմիջապես առաջ, ապա պարարտանյութի վորոշ մտու պետք եւ պահել և տալ կոկոնակալման ժոմանակ, միջշարքային տարածություններում նախապես կատարված ակոսներով, վորոնք պիտի ունենան 10—12 սմ խորություն, իսկ պարարտանյութը պիտի ծածկել վոչ պակաս 15 սմ խորությամբ։ Դրանից հետո բամբակը պիտի ջրել 2—3 անգամից վոչ պակաս։

Բարձր բերք (25—30 ց) տալու պարտավորություն վերցրած կոլտնտեսություններում, բրիգադներում և ողակներում պիտի սահմանել պարաբուտացման ավելի բարձր դոզաներ։ Պարաբուտացման դոզաները տարբեր հողերում և տարբեր պայմաններում տարբեր են լինելու, ուստի դոզայի խնդիրը չուրաքանչյուր անդամ պիտի համաձայնեցնել ՄՏԿ-ի հետ և ղեկավարվել նրա տված ցուցմունքներով։

Անհրաժեշտ ե խիստ հետևել վորպեսզի պարաբուտանյութը չաշտում շաղ տրվի խնամքով և համահավասար։ Դրա համար պետք է ընտրել փորձված մարդկանց և, բացի այդ, յուրաքանչյուր հոգակտորի պարաբուտացումը պիտի կատարել նախորոք վորոշված և կշռված քանակի պարաբուտանյութով։

Շաղ տալուց հետո հողը պիտի իսկույն վարել, վորովհետեւ հողի յերեսին շաղ տրված պարաբուտանյութ թողնելը կարող ե պատճառ դառնալ դրա մեջ յեղած սննդանյութի վորոշ մասի կորսույան։

Ուժեղ քամինների ժամանակ չպետք եւ հանքային պարաբուտանյութ շաղ տալ։

Բամբակի պարաբուտացման համար լիովին պետք եւ ողտագործել նաև տեղական բոլոր տեսակի պարաբուտանյութերը, այն եւ գոմազը, մարդկանց կղկղանքը, թոչունների ծիրտը, առօւ-

ների մեջ յեղած տիղմը, քանդված շենքերի հողը, մոխիրը և ալլն։ Տեղական պարարտանյութերը ևս ավելի լավ արդյունք են տալիս, յերբ հողի մեջ մտցվում են աշնանը, ցրտահերկի ժամանակ, կամ վաղ գարնանը՝ առաջին խոր վարի ժամանակ։ Այդ պարարտանյութերը դաշտ փոխադրելուց և ցրելուց հետո հողն անմիջապես պիտի վարել, իսկ յեթե վարն ուշանում է, ապա պարարտանյութերը դաշտում պիտի պահել մեծ կույտերով և ալնալիս, ինչպես հրահանգված եւ Հողժողկոմատի կողմից։

Մոխիրը պետք է հողի մեջ մտցնել զոմաղրի հետ միասին։ Գոմաղրի պարարտացում առաջին հերթին պետք է կատարել այն հողերում, վորոնք ունեն ֆիզիկական վատ կառուցվածք։

Յուրաքանչյուր հեկտարին պիտի տալ 30—35 տոնն տեղական պարարտանյութ։ Բոլոր պարարտանյութերը պետք է պահել չոք շենքերում կամ ծածկոցների տակ, վորովհետեւ անձրևաջրերը նրանց միջից լվանում և հեռացնում են սննդանյութերի վորոշ մասը։ Բացի այդ, խոնավ և վատ պայմաններում պահվելու դեպքում նրանք փչանում են։

## ՍԵՐՄԱՑՎԻ ՆԱԽԿՊԱՏՐԱՍՈՒՄԸ

Սերմացուն պետք է պահված լինի չոք պայմաններում, ունենա բարձր սորտային մաքրություն, թարմ և առողջ տեսք, բարձր բացարձակ կշիռ և ծլունակություն։

Բացի դրանից, ցանքը պիտի կատարել լինտերովկայի յենթարկած, ապա սև ու մերկ, փուչ, վոչ լրիվ զարդացած և անպետք սերմերից զտած ու ֆորմալինով ախտահանած սերմերով։ Շատ կարևոր է նաև ցանվող սորտին հատուկ դույն ու տեսք չունեցող և վոչ տիպիկ բոլոր սերմերն անջտանել և հեռացնել։ Իրեն սերմացու անհրաժեշտ է հատկացնել այն սերմը, վորն ստացված է մինչև աշնան ցրտահարությունը հավաքած բամբակից։ Ցրտահարությունից հետո հավաքած բերքի սերմն իրեն սերմացու շպիտի գործածել։

Ցանքը պիտի կատարել  $85^{\circ}/_0$  և դրանից ել բարձր ծլունակություն ունեցող սերմերով։  $85^{\circ}/_0$ -ից ցածր ծլունակություն ու-

Նեցող սերմի յուրաքանչյուր տոկոսին սերմի քանակը պիտի ավելացնել մեկ կիլոդրամով՝ 75°/₀-ից պակաս ծլունակություն ունեցող սերմացու ցանել բոլորովին արգելվում է:

Այն գեղքերում, յերբ ցանքից առաջ սերմերը թրջում են, ապա այդ գործողությունը պիտի կատարել 30—40 ժողով ցանքից առաջ՝ հոսող ջրի մեջ։ Հոսող ջուր չլինելու դեպքում թրջել կարելի է նաև տակառների կամ փոսերի մեջ, անհրաժեշտ ե միայն, վոր ջուրը թարմ լինի։ Սերմերը ջրի մեջ դրվում են պարկերով և տյնաղես, վոր պարկերն ամբողջապես ծածկվեն ջրով։ Պարկերում սերմերը պետք ե բռնեն նրանց 1/3 մասը։ Յերբ թրջելուց հետո ցանքը վորեն պատճառով ուշացել ե և սերմերը տվել են 2—3 մմ ավելի յերկար ծիլեր, ապա կտտեկորիկ կերպով պետք ե արգելել նման սերմեր ցանելը։ Շարքացանի աշխատանքն անխափան դարձնելու համար անհրաժեշտ է թրջած սերմերին խառնել մոխիր և ապա տրոլել՝ իրարից անջատելու համար։

## ՑԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Ցանքը պետք ե հաջորդի նախացանքալին աշխատանքներին, անմիջապես, մանավանդ արաթի դեպքում։

Խորհրդային Հայաստանում բամբակի վեղետացիուի շրջանը համեմատաբար այնքան ել լերկար չի, և բամբակի կնդուղների վորոշ մասը մինչև աշնան ցրտերը չի հասունանում և սեռնում է ցրտահարությունից։ Այն կնդուղներն ել, վորոնք բացվում են ցրտահարությունից հետո, տալիս են ցածր վորակի բամբակ։ Այդ ե պատճառը, վոր մեզ մոտ ցանքի ժամանակի ճիշտ ընտրությունը և տոանց ուշացումների ցանք կատարելն ունի կարևորագույն նշանակություն։ Դա անհրաժեշտ է նաև սերմերի միահավասար, համաչափ (ՃՐԿՈ) ծլելու, ինչպես նաև բռւլսերի հետազտ զարգացումն ապահովելու համար։ Բամբակի ցանքը պետք ե սկսել այն ժամանակ, յերբ անցել ե գարնան ցրտահարության վատնզը

Անալիզի լենթարկելով տարբեր շրջանների սկերեռութաքանական տվյալները 1922—1934 թ. ներառյալ՝ գտլիս ենք այն յեզրակացության, վոր Հայաստանի բամբակացան տոքքեր շրջ-

ջաններում ցանքը պիտի կտարել ապրիլի 20—22-ից մինչև  
մայիսի 5—10-ը։ Տափան անելու աջխատանքներն սկսվելու յեն  
ապրիլի 25-ից, յերբ ծլաջրից հետո յեկել և հողի քեշը, և վեր-  
ջանալու յեն մայիսի 10—15-ին։ Ցանքի ժամանակը վորոշելիս  
հաշվի պիտի առնել այն, վոր սերմերի ծլելու տևողության վրա  
խոշոր նշանակություն ունի հողի ջերմությունը։ Փորձերը ցույց  
են տվել վոր յերբ ցանքը կատարվում է շատ վաղ (մարտի վեր-  
ջին կամ ապրիլի սկզբին), ապա սերմերն ընկնելով ցուրտ և խո-  
նավ հողի մեջ՝ այնքան ժամանակ չեն ծլում, մինչեւ վոր հողի  
ջերմությանը  $13^{\circ}$ — $14^{\circ}$  ավելի յերեք բարձրանում։ Սերմերը յերկար  
ժամանակ մնալով սառը հողում (15—20 որ)՝ տալիս են թուզ,  
դեղին և նույնիսկ գորշագույն շաքիլներ։ Բացի դրանից, սառը և  
խոնավ հողերում յերկար մնացող սերմերի խոշոր մասը բոլորու-  
մին չի ծլում և հոտում է, վորի հետևանքով կամ ցանքի տարա-  
ծությունն և պակասում, կամ մենք ստիպված ենք լինում ուշա-  
ցած կրկնացան կատարել։ Ժամանակին, այսինքն՝ սկսած ապրի-  
լի 20—22-ից մինչև մայիսի առաջին տասնորյակը, ցանքած սեր-  
մերը սովորաբար ծլում են 5—10-րդ որը, ծիլերը յերեսում են  
միահավասար, լինում են առողջ, մուղկանաչ գույնի և հեղտու-  
թյամբ ել դիմադրում են միջատներին ու հիվանդություններին։

Փորձերը ցույց են տալիս, վոր ուշ ցանքերը 3—5-րդ որն  
արդեն ծիլեր են տալիս, վորովհետեւ այդ ժամանակ հողը տաք ե  
լինում։ Ծիլերը յերեսում են միասին և լինում են առողջ։ Սակայն  
վորքան ել ծիլերի դրությունը լավ ե լինում, բայց և այնպես  
ուշ կատարած ցանքը չի տալիս այն արդյունքը, ինչ արդյունք  
ուսացվում է ճիշտ ժամանակին արած ցանքից, վորովհետեւ վոր-  
քան բամբակն ուշ ե ցանքում, այնքան ել զարդացման համար  
բիչ ժամանակ և մնում մինչեւ աշնան ցըտերը, վորը մեր պայ-  
մաններում ունի խիստ բացառական նշանակություն։

Ցուրաքանչյուր շրջանում, կոլտնտեսությունում և բրիզա-  
դում ցանքի սկիզբը և վերջը պիտի սահմանեն և ճշտեն հողբա-  
ժինը և ՄՏ կայանը, հաշվի առնելով հողի ջերմությունը և փորձ-  
ված կոլտնտեսականների ու ագրոպերսոնալի դիտողությունները։  
Ցանքը պետք ե սկսել առաջին հերթին թեթև և արագ չո-

բոցող հողերում և աստիճանաբար անցնել ավելի ծանր հողերի շահքին:

Ծլաջրի դեպքում ցանքի սկիզբ պիտի համարել այն որը, յերբ բամբակը ջրվել եւ:

## ՑԱՆՔԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՐՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Ցանքի խորության հարցը վորոշելիս հաշվի պիտի առնել հողի ֆիզիկական և մեխանիկական կաղմի առանձնահատկությունները, նախապատրաստական աշխատանքների վորակը, հողի վերեկի շերտի խոնավության չափը, ցանքի ժամանակը, մըթնոլորտային տեղումների լարվածությունը (ջերմության, քամիների, ամպամածության, տեղումների) և այլն: Բոլոր դեպքերում եւ ցանքի խորությունն ըստ առանձին հողերի պիտի վորոշի ագրոնոմը՝ կոլտնտեսականների ողնությամբ:

Միջին հաշվով գարնան արաթ անելու դեպքում ցանքի խորությունը պիտի տատանվի 5—6 սմ սահմաններում, իսկ ծլաջրի դեպքում՝ 3—4 սմ սահմաններում:

Վաղ ցանք կատարելու դեպքում սերմերը պիտի ցանել հանեսատարար ավելի «սաղը» (յերեսանց), ուշ ցանելու դեպքում՝ խոր:

Ցանքից սուած պիտի կանոնավորել շարքացանն այնպես, վոր նա ցանի այնքան սերմացու և այնպիսի խորությամբ, ինչպիսին վորոշված են նախորոք: Ցանքը պիտի կատարել բացառապես ուղիղ շարքերով, վոչ մի դեպքում թռւյլ չտալով ծուռումուա, ձևավոր ցանք: Այդ իսկ տեսակետից արաթ արած հողերում ցանքն անպայման պետք են կատարել մարկուրով:

Մեկ հեկտարին պիտի ցանել 75 կիլոգրամ սերմացու: Միջշարքային և միջքային տարածությունները տարբեր հողերում տարբեր պիտի լինեն: Այդ տարածությունները սահմաննելիս հաշվի պիտի առնել աշխատանքների մեխանիկացիան, հողերի ուժեղ կամ թույլ լինելը, ստորերկրյա ջրերի մոտիկությունը և այլն: Այն հողերում, ուր ցանքը և մշակությունը կատարելու յեն տրակտորով, միջարքային տարածությունները պետք են հարմարեցնել մշակող և բերքահավաք կատարող մեքենաների պահանջներին:

Հնդկանուր առմամբ միջարքային տարածությունների լայնությունը պիտի տատանվի 55—70 սմ սահմաններուն, վորը յուրաքանչյուր կոլտնտեսության, յուրաքանչյուր հողամասի համար ձշտվում ե տեղում, ՄՏԿ-ի կողմից: Ցանելիս խիստ պիտի հետեւ, վոր չցանված շարքեր չլինեն վոչ գլխաղարձերում և վոչ ել արտի մեջ: Նման դեպքեր նկատելիս շարքերը պիտի լրացնել ձեռքի ցանք կատարելով: Բարձրորակ ցանք ապահովելու համար այդ աշխատանքները պիտի հանձնարարել դասընթացներում սովորած և փորձված մարդկանց, վորոնք պիտի լավ տիրապետեն ցանքի աեխնիկային: Դրա հետ մեկտեղ, խիստ պիտի հետեւ, վորպեսզի ցեխ, ինչու նաև չորացած (արաթի դեպքում) և ապա կոշտու հողերում ցանք չկատարվի: Ցանքը գիշեր ժամանակ և ապա չզուած ու չախտահանած սերմերով պիտի արգելվի:

Ցանքից հետո սխտեմատիկորեն պիտի ստուգել դաշտերը՝ ժամանակին պարզելու սերմերի ծլման ընթացքը, ինչպես նաև ծիլերի դրությունը: Այն դեպքում, յերբ սերմերը ցանված են նորմալ խորությամբ, բայց հողի չորության պատճառով ծիլերը  $40^{\circ}/_0$ -ով բացակայում են, պետք է անմիջապես դաշտը նորից ջրել: Յեթե սերմերը չեն ծլել խոր ընկնելու պատճառով, ապա անհրաժեշտ ե անմիջապես կրկնացան անել, իսկ յերբ բաց են մնացել վորոշ շարքեր միայն, առա պիտի շարքերում թրջած սերմերով բնացան կատարել: Մասնակի վերանորոգման դեպքում դարձյալ պետք է տնկել թրջած սերմեր և ըներով:

Թե կը կնացանի և թե վերանորոգման աշխատանքները պետք ե վերջանան մինչև մայիսի 15-ը:

## ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Բամբակի բերքատվության բարձրացման խնդրում մեծնշանակություն ունի ցանքերի խնամքը: Բաղմաթիվ փորձերն ու դիտողությունները ցույց են տվել, վոր ցանքերի վատ մշակումն ու սխալ կատարվոծ ագրոտեխնիկական ձեռնարկումները միշտ ել առաջ են բերել բերքի ուժեղ անկում: Այդ սխալներից խո-

սափելու և բամբակի բարձր բերքատվությունն ապահովելու համար տնհրաժեշտ եւ գործն այնպես կազմակերպել, վորպեսդե խնամքին վերաբերող ըոլոր աշխատանքները կատարվեն ժամանակին ու արագ և վորակական բարձր ցուցանիշների նշանաբանի տակ: Անհրաժեշտ աղբուոեխնիկական պահանջները ժամանակին, լրիվ և ճիշտ կատարելու միջոցով (խնամքով կատարված քաղհան, ջուր, նոսրացում, փխթեցում և այլն) մեզ կհաջողվի աղղել բամբակենու նորմալ զարգացման համար պահանջվող ոլայմանների վրա, բարձրացնել բերքատվությունը և կատարել ու դերակատարել պետական առաջադրանքը:

Բամբակի ցանքերի խնամքին վերաբերող աշխատանքները հետեւալներն են, տափան կամ փոցի՝ ցանքից հետո, քաղհան և կուլտիվացիոն, նոսրացում և ջուր: Վնասատուների և հիվանդությունների գեմ տարվաղ պայքարը նաևնպես խնամքի աշխատանքների մեջ ե մտնում, բայց դրա մասին մենք այստեղ չենք խոսելու:

## ՏԱՓԱՆ, ԿԱՄ ՓՈՑԻ ՑԱՆՔԻՑ ՀԵՏՈ

Ծլաջուք տալուց (վորը տրվում եւ ցանելուց անմիջապես հետո) մի քանի որ հետո, յերք յեկել ե հողի «քեշը», մարդերի յերկարությամբ պիտի կատարել տափան կամ փոցի: Դա շատ կարելոք գործողություն ե՝ ստացված կեղել ջարդելու և նորածիլ առլախուուերը վոչնչացնելու համար: Յեթե տափաննելիս կամ փոցինելիս բամբակի վաղ յերեացող վորոշ ծիլեր կտրվում ե վոչնչանում են, դրանից չոլիտի վախինալ: Հասկանալի լե, վոր այդ աշխատանքը վոչ կարելի լե ուշացնել ե վոչ ել շուտ կատարել, վորովհետև առաջին դեպքում կկտրատվի բամբակի ծիլերի մեծ և ամենաառողջ մասը, իսկ յերկրորդ դեպքում հողը կովաղվի: Արաթած արտերք պիտի փոցինել այն դեպքերում, լերը անձրեն պատճառով հողի կեղեակալման վտանգ ե ստեղծվել: այդ դեպքում հողի չորանալը և կեղեւ կաղմելը կանխելու համար փոցինել անհրաժեշտ ե առանց հապաղումների՝ 1—2 որվա ընթացքում:

## ՔԱՂԼԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏԻՎԱՑԻԱ

Քաղհանի և կռւլուիվացիայի նպատակն և պայքարել մոլախուուերի դեմ և ստեղծել բարենսպաստ պայմաններ՝ կուլտուրական

շույսերի զարգացման համար։ Մոլախոտերի դեմ կռվելու աշխատանքներն սկսվում են նախքան ցանքը և մեծ արդյունք են տալիս, յերբ նրանք ճիշտ են կատարվում։ Աշնանային խոր վարը, գարնանն իր ժամանակին և ճիշտ կատարված կրկնավարը և փոցխելը, միջնակներից և առուների վրայից սիստեմատիկորեն մոլախոտերի վոչնչացնելը, ժոմանակին կատարված ցանքը և փխրեցումները մեծ ազդեցություն են թողնում բամբակի հետապա դարձայման վրա և մեծապես հեշտացնում են ցանքի նկատմամբ կիրառվելիք խնամքը։ Հակառակ դրություն և ստեղծվում, յերբ ցանքին նախորդող աշխատանքները կատարվում են անփույթ և տնինամ։

Քաղհանի և կուլտիվացիայի աշխատանքները բաժանվում են յերկու մասի—քաղհան և կուլտիվացիա՝ միջարքային տարածություններում և քաղհան ու փխրեցում՝ շարքերում։ Ցանքից վորոշ ժամանակ անց, յերբ յերեսում են բամբակի մասսայական ժիշերը, պիտի կատարել առաջին մշակումը (կուլտիվացիա՝ շարքաժիշյան տարածություններում և քաղհան՝ շարքերում)։ Այդ մշակման ժամանակ կուլտիվացիան պիտի կատարել այնպես, վորհողի շերտը կտրվի և առանց շուր դալու տեղում մնան Դրա համար կուլտիվատորի սովորական թաթերի փոխարեն պիտի գործադրել կտրող և սուր դանակներ։ Առաջին կուլտիվացիան պիտի կատարել նաև այն հաշվով, վոր կողքերի կտրող դանակները շարքերից մոտ 10 ամ հեռու մնան։ Հետագա կուլտիվացիաների ժամանակ տոջնից ոլիտի դնել փխրեցնող թաթեր, կողքերից՝ կտրող դանակներ և հետևից՝ սաղաձե թաթեր։

Հաջորդ մշակումները, նայած հողի մոլախոտերով վարակված լինելու չափին, այդ մոլախոտերի տեսակներին, հողի կեղեփակալելու առաջանանին, ոլիտի կատարել 12—17 որը մեկ անդամ։ Մշակման թիվը տարբեր տեղերում լինելու յի տարբեր և կախված է լինելու վեղետացիայի ընթացքում բամբակին արվող ջրի թվից, հողային տիպերի առանձնահատկություններից և այլն։ Ընդհանուր առժամբ ամբողջ վեղետացիայի ընթացքում ցանքերը պիտի մշակվեն 4—5 անգամից վոչ պակաս, իսկ մոլախոտերով ուժեղ վարակված հողերում դրանից ել ավելի։ Այդ աշխատանք-

Ները պիտի կատարել այն հաջվով, վոր բամբակի ցանքերը միշտ լինեն մոլախոտերից միանգամայն մաքուր և փուխը վիճակում։ Մաքուր պիտի պահել նաև մշակվող հողամասերում գտնվող բուլոր խոպան տարածությունները, թմբերը, ջրառար առուները, միջնակները և այլն, վորոնք պիտի քաղհանվեն բամբակի բոլոր մշակումներին զուգընթաց։

Մոլախոտերի դեմ պայքարելու և բույսերի զարգացման պայմանները լավացնելու տեսակետից կարևոր ե մեծ ուշադրություն դարձնել մշակման խորության վրա, ըստ վորում դանդուրդանով և այլ կոճղարմատավոր մոլախոտերով վարակված հողերում մշակման խորությունը պիտի լինի 10—12 սմ, իսկ մուացած դեպքերում՝ 8—10 սմ։

Պատառուկով վարակված դաշտերում նախ պիտի շարքերում կատարել ձեռքի քաղհան և ճետո նոր կուլտիվացիա՝ միջաբացին տարածություններում։ Մնացած բուլոր դեպքերում նախ պիտի կատարել մշակման աշխատանքները միջաբացին տարածություններում և ապա նոր քաղհան՝ շարքերում։

Յուրաքանչյուր անգամ վեղետացիոն ջրից, ինչպես նաև հորդ անձրեից հետո անպայման պետք ե կատարել բամբակի ցանքերի մշակում, վորովհետեւ ջրելուց հետո հողը կեղև և կտպաւմ, վորը դժվարացնում ե ողի մուտքը հողի մեջ և նպաստում ե ջրի գոլորշիացմանը հողի մակերեսից, իսկ բույսերի զարգացման այդ շրջանում ամեն մի առիթ, վորը պակսեցնում ե ինչպես ջրի և սննդանյութերի, այնպես ել թարմ ողի քանակը հողում՝ պատճառ ե դառնում նաև բույսերի թույլ զարգացման, պըտղավիժման, ապա և բերքի անկման։ Այստեղից պարզ է, վոր մեծ ե կուլտիվացիայի և քաղհանի դեքը վեղետացիոն ջրումներից հետո թե ողի մուտքն ու յելքը հեղտացնելու և թե հողի մեջ չեղած ջուրը խնայողաբար ծախսելու խնդրում։ Պնդացած և կեղևվակալած հողերում ստեղծվում ե մազական անցքերի անընդհատ սխտեմ, վորոնց միջով ջուրն անարդել բարձրանում և գոլորշանում ե հողի մակերեսից։ Այդ մազական անցքերի խախոռւմը, վորոշ խորությամբ, ստեղծում և հողի մակերեսի վրա զատիչ շերտ, նվազեցնում և խոնավության գոլորշիացումը և հեղտացնուաթարմ ողի մուտքը հողի մեջ։

Մեղ մոտ մշակման աշխատանքները պիտի կատարել մուտքորապես հետևյալ հերթականությամբ:

Յանքից մոտ 20—30 որ հետո պիտի սկսել առաջին քաղհանը և կուլտիվացիան և ավարտել հունիսի 1-ին:

Յերկրորդ քաղհանն ու կուլտիվացիան պիտի կատարել այս առաջին քաղհանից մոտ 12—15 որ հետո: Մեղ մոտ այդ աշխատանքները պիտի սկսել հունիսի 1-ից և վերջացնել նույն ամսի 15-ին:

Յերրորդ քաղհանը և կուլտիվացիան պիտի սկսել հունիսի 16-ին և ավարտել հուլիսի 5-ին:

Չորրորդ քաղհանն ու կուլտիվացիան պիտի կատարել հուլիսի 6-ից մինչև նույն ամսի 25-ը, հինգերորդ քաղհանը պիտի սկսել հուլիսի 26-ին և ավարտել ողոստոսի 10-ին: Դրանից հետո, յեթե վորոշ արտերում զարգանում են ղանղուրդանք, կպչուկը և ուրիշ մոլախոտերը, առաջ պիտի կատարել լրացուցիչ մշակություն ևս, վորոշ սկսվելու յետ ողոստոսի 11-ից և վերջանալու յետ նույն ամսի 25-ին:

Այսպես, ուրին, համարյա բոլոր շրջանների համար վերջին մշակումը տեղի յետ ունենում մոտավորապես ոպոստոսի 3-րդ տասնորյակում: Կարող են լինել դեպքեր, յերբ հողի պակաս բերրիության կամ ուրիշ պատճառներից բամբակենին վերջին ջրից հետո ել չկարողանա շաքերը լցնել: Նման դեպքերում մոլախոտերի զարգացումն անխափան կշարունակվի նաև դրանից հետո, ուստի անհրաժեշտ ե դրանք հեռացնել ձեռքով:

Բամբակի ցանքերի կուլտիվացիան և քաղհանը կարող են առաջ դգալի եֆեկտ միայն այն դեպքում, յերբ կատարվում են ժամանակին, առանց ուշացումների և բարձրորակ, յերբ մոլախոտերը դեռ նոր են ծիլեր արձակել և դգալի բարձրության չեն հասել: Ուստի, յելնելով մշակման վերոհիշյալ ժամկետներից՝ յուրաքանչյուր շրջան, յուրաքանչյուր կոլտնտեսություն ազրոնումի ողնությամբ պետք է կոնկրետացնի այդ թվերը և աշխատանքներն սկսելու և վերջացնելու այնպիսի ժամկետներ մշակի, վորոնք համապատասխանեն իրենց պայմաններին և ամենից լավ ապահովեն բամբակենու ուժեղ զարգացումն ու բարձր բերքատվությունը:

## ՆՈՍՐԱՑՈՒՄ

Նոսրացման նպատակն եւ ստեղծել բամբակենու համար այնպիսի խտություն, զարդացման այնպիսի միջավայր, ոերբ հոգի ոգտագործումը կատարվում է ամենառացիոնալ կերպով։ Սովորաբ բամբակի ծիլերը յերեալուց հետո նոսրացում չի կատարվում, եւ բույսերը զարդոնում են այն խտությամբ, ինչ խտությամբ ծլած են լինում։ Նորմալ պայմաններում այդ խտությունը շատ մեծ ե լինում և նոսրացման ուշացումը մեծապես պակասեցնում է բամբակի բերքը։

Մեծ մասամբ կարիք ե լինում հեռացնել ծլած բույսերի խոշորագույն մասը, վորով և զարդացման նորմալ պայմանների մեջ ևն դրվում ֆնացած բույսերը։ Բանի վոր բույսերի ճիշտ խտություն վորոշելը, ապա դրա համապատասխան նոսրացում կատարելն ապահովում է բույսերի հետազա արագ զարդացումը և բերքատվության բարձրացումը, ուստի այդ գործողությունը պիտի արժանանա հատուկ ուշագրության և կատարվի ժամանակին ու հեշտ։ Խոշոր նշանակություն ունի առաջին նոսրացման ժամանակը։ Շատ վաղ նոսրացում կատարելու դեպքում մեծանում է մոնոպոլիալ ճյուղերի տոկոսը, մի հանգամանք, վոր բացասական նշանակություն ունի բերքի բարձրացման տեսակետից, իսկ ուշկատարված նոսրացման դեպքում ել քչանուժ է ճյուղերի և կընդուղների թիվը, ուշանում է նրանց հասունացումն ու բացվելը։ Ֆեվ այսպես, այդ կարևոր գործողության—նոսրացման—թե ուշացումը և թե վտակ կատարելը վատ և անդրադառնում բերքատվության վրա։

Նոսրացնելիու պիտի ուշագրության առնել բույսի ընդհանուր զարդացման տեմպը, յեղանակները, հիվանդությունների և վաստառների տարածված լինելու չափը։

Յելնելով այդ բոլորից՝ Հայաստանի բոլոր շրջաններում առաջին նոսրացման կարելի չե և պետք է անցնել այն ժամանակ, յերբ բույսերի մեծ մասի վրա կա<sup>1—2</sup> իսկական տերեւ, (յեթե միայն լավ յեղանակներ են և բացակայում են վնասատուներն ու հիվանդությունները)։

Նոսրացումն սկսվում է մոտավորապես մայիսի 18-ից և ավարտվում է նույն ամսի վերջին, այսինքն՝ տռաջին քաղհանգի ժամանակ։ Յեթե յեղանակը ցուրտ է և տարածված են վնասատուներ ու հիվանդություններ, ապա նոսրացումը պիտի սկսել մի քանի որով ուշ։ Յուրաքանչյուր մի բնում պիտի թողնել 2 տառական բույս, իսկ բունը բնից՝ 10—12 սմ հեռավորության վրա։ Յերկրորդ և վերջնական նոսրացումը պիտի կատարել այն ժամանակ, յերբ յերեսն են յեկել 4—5 իսկական տերե, ավարտելով այդ գործողությունը 15/VI-ին։ Այս անգամ ամեն մեկ բնում պիտի թողնել 2 բույս, իսկ բների հեռավորությունը մինչյանցից՝ 20—25 սմ։

### Նոսրացման վերջում արտում պիտի լինի հետեւյալ դրությունը՝

Միջամբը՝ արած.	50 սմ, միջը՝ արած.	20 սմ, բույսերի թիվը հեկտ.	Վրա	182000
»	60 »	20 „	»	166000
»	60 »	25 „	»	133000
»	65 »	20 „	»	153000
»	65 »	25 „	»	123000
»	70 »	20 „	»	143000
»	70 »	25 »	»	114000

Գարդ է, վոր թե միջարքային և թե միջբուսային տարածությունները վորոշվելու և ճշտվելու յևն տեղերում, ըստ վորում ուժեղ հողերում այդ տարածությունները մոտ 5 սմ-ով ավելի պիտի լինեն, քան թույլ հողերում։ Յանքի խորսրությունը վորոշելիս միշտ պիտի առաջնորդվել հողի ռացիոնալ ողտագործման մոմենտով և մշակման աշխատանքների մեխանիզացման նպատելու անհրաժեշտությամբ։ Մոռացության չպիտի առաջնական սորտի առանձնահատկությունները։

Նոսրացումը պիտի կատարել ձեռքով, ըստ վորում պիտի հեռացնել թույլ հիվանդ և վնասված բույսերը, թողնելով առաջ և լավ զարգացածները։ Նոսրացումը պիտի կատարել մեծ խնաժքով և այնպես, վոր թողնվելիք բույսերը չվնասվեն, իսկ հանած բույսերը դաշտից պիտի հեռացնել։ Նոսրացնել անհրաժեշտ և քաղհանից և կուլտիվացիայից հետո, նբանցից անկախ, վորի համար պիտի առանձնացնել փորձված մարդկանց։

## ԲԱՄԲԱԿԻ ԶՈՒՐԸ

Վոռովվող շրջաններում ջրելը մի հղոր միջոց և բույսերի չերքատվությունը բարձրացնելու համար:

Հայաստանի բամբակացան շրջաններում մթնոլորտային աեղումներն այնքան քիչ են (մոտ 270 մմ) և նրանց բաշխվածությունը տարվա տարբեր չեղանակներին այնքան աննպաստ է, վոր առանց արհեստական վոռովման բամբակի մշակությամբ դրաղվել չի կարելի: Դրա հետ մեկտեղ լինում են դեպքեր, յերբ բամբակն այնքան են ջրում, վոր դրանից բռւյսերը դեղնում են, նրանց արմատները հողում զգում են թթվածնի պակաս, վորի հետևանքով տեղի յեւ ունենում ծաղիկների և կոկոնների վիժում: Բացի այդ վնասից, նրանք դրանով անարդյունավետ կերպով են ծախսում ջրային ռեսուրսները, ուստի և ընդհանրապես վնաս են պատճառում մեր ժողովրդական տնտեսությանը: Այս այդ սխալներից խուսափելու համար անհրաժեշտ ե իմանալ, թե ինչ ձևերով և յերբ պիտի ջրել բամբակը

Հայտնի յեւ, վոր բամբակի բերքը կախված և վոչ միայն բռւյսերի վրա յեղած կնդուղների ընդհանուր թվից, այլ նախ և առաջ նրանից, թե այդ կնդուղների վեր մասն և բացվում մինչև «շախտաները» և ինչպիսի քաշ ունեն այդ կնդուղները: Այս իսկ տեսակետից մեծ նշանակություն ունի բամբակենու նկատմամբ ջրային ճիշտ սեծիմ պաշտպանելը, վորովինետեւ այդ ոեծիմը մեծ ազդեցություն և ունենում բամբակի ծաղկելու, հասունանալու և կնդուղների բացվելու ընթացքի վրա:

## ԶՐԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ

Բամբակի ջրելու մի քանի ձեեր գոյություն ունեն (ակոսներով, սովորական մարգերով, «լաքաններով» և այլն), սակայն դրանցից մեզ մոտ առայժմ յերկուսն ունեն գործնական նշանակություն: Դրանցից մեկը մեր սովորական ձևով մարգերի վրա ջուր բաց թողնելն ե, իսկ մյուսը՝ ակոսներով ջրելը,

Մարգերով ջրում են այն տեղերում, ուր հողի մակերեսը

Հարթ եւ Զգալի թեքություններ և անհարթություններ ունեցող հողերում այս ձեռվ ջրելու դեպքում արտի խոնավացումը տեղի յէ ունենում անհավասար։ Այս դրությունն ավելի ես վատթարանում ե, յերբ մարդերը շատ յերկար են լինում։ Այդ եպատճառը, վոր մեզ մոտ սովորաբար շատ յերկար մարդեր չեն շինում, ոկոճակներծ են տալիս և դիմում են սի շարք այլ միջոցների արտը հավասարապես ջրելու համար։ Շատ կարճ մարդեր շինելու դեպքումն ել ջուրը լավ չի ծծվում հողի մեջ և բամբակը դրանից առուժում ե։

Ջրելու յերկլորդ և ամենալավ յեղանակը համարվում ե ակոսներով ջրելը։ Այս ձեռվ ջրելու համար ամեն անգամ, ջրելուց տեսած, շարքերի մեջ կուլտիվատորով կոմ բուլկիցով բաց են անում ակոսներ, և նրանց միջոցով բաց թողնում ջուրը։ Զուրն ակոսներով պետք ե բաց թողնել բարակ և թույլ հոսանքով։ Այդ ժանն ավելի կարեռ ե ջրելու սկսվելում։ Աստիճանաբար ջրի հոսանքը կարելի է ուժեղացնել, յերբ այն հասել ե արդեն ակոսների կեսերին։ Թույլ հոսանքի դեպքում ջուրը ծծվում ե հողի մեջ ավելի խոր և աստիճանաբար, և հողի կնճիկների քայլքայում ու փոշիացում շատ քիչ ե լինում։ Ակոսի կողքերը նույնպես առաջինաբար են խոնավանում և չեն քանդվում ջրի ուժեղ հոսանքից։

Ուժեղ հոսանքի դեպքում ակոսների կողքերի և հատակի հողի մասնիկները փշրվում, փոշի յեն դառնում, վորի պատճառով ջուրը մեծ դժվարությամբ և ծծվում հողի մեջ։

Թույլ հոսանք պիտի լինի առանձնապես անհարթ և թեքություն ունեցող հողերում, հակառակ դեպքում ջրելը կդառնա ֆառակար գործողություն։

Ուժեղ թեքություն ունեցող հողերում ակոսները պիտի բաց անել թեքությանն ուղղահայաց և ջուրը բաց թողնել թույլ հոսանքով։

Ակոսներով ջրելու դեպքում ակոսի վերին մասը պիտի ամրացնել, իսկ վերջին մասում պիտի շինել ավելորդ ջուրը դուրս տանող առու (ջրհավաք առու)։ Զուրն ակոսով պետք ե հոսի այնքան ժամանակ, մինչև վոր թմբերը սկսան։

Մեզ մոտ տեղի դիրքով և հողային տուանձնահատկություններով հողերն ել չպետք ե դրվեն ակոսային ջրի տակ, ուստի ակոսաջուր կատարելու համար անհրաժեշտ և ագրոնոմի հետ միասին ընտրել հարմար հողեր:

Ակոսներն իրենց հերթին կարող են լինել ծանծաղ և քաշ, վորը մինչեւ այժմ կիրառվել ե Հայաստանում, և խոր ու փակ: Խոր ու փակ ակոսներով ջրելու ձեզ նոր և և առաջարկվել ե պրոֆ. Շարովի կողմից: Այս ձեզ սովորական ակոսաջրից տարբերվում են նրանով, վոր ակոսներն արվում են ավելի խոր — 20 սմ խորությամբ և վերջում ել փակ են լինում: Զուրն ակոսներում մնալով առաջնանարար ծծվում ե հողի մեջ և մեծապես նպաստում ընթափի բարձրացման: Այդ ձենի մի շարք առավելություններ են: Մեր պայմաններում այդ ձենի վորով 1936 թվին կիրառվելու յե առաջին անգամ և կրելու յե փորձնական բնույթ:

Հետաքրքիր ե այժմ պարզել, թե բամբակի ցանքերը յեր՝ բանի անգամ պիտի ջրել.

## ԶՐԵԼՈՒ ԹԻՎԸ ՅԵԿ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Վառովճան թիվը և ժամկետներն այնպես պիտի կարգավորել, վոր բամբակենին բավարարված լինի ջրով պահանջված ժամանակ և պահանջված քանակությամբ: Պահանջից ավելի ջուր տալու դեպքում ուժեղ չափով աճում են բամբակենու վեղետատիք մասերը, քիչ կոկոններ են ստացվում, ուշանում ե նրա ծաղկելն ու հառունանալը, դրա հետևանքով ել պակասում ե բերքը: Պակաս ջուր տալու դեպքում բույսը զարդանում ե անբավարար, տեղի յե ունենում կոկոնների և ծաղիկների դժալի կորուստ և դրանից դարձյալ պակասում ե բերքը:

Բամբակի վեղետացիոն ջրերը տալու ժամանակ հաշվի պիտի առնել լուրաքանչյուր ասանձին հոգամասի տուանձնահատկությունները և թիվն ու ժամկետները խիստ դիֆերենցիացիայի յենթարկել, ըստ վորում թույլ, սակավազոր և ուժեղ թեքություն ունեցող հողերն անհրաժեշտ ե ջրել համեմատաբար ավելի հաճախակի, առաջին ջուրը պիտի առ ավելի շուտ, իսկ

վերջինն ավելի ուշ՝ Դրան հակառակ՝ ծանր, ուժեղ, խոնավունակ և քիչ թեքություն ունեցող հողերում բամբակը պիտի ջրել վոչ հաճախակի, առաջին ջուրը պիտի տալ ուշ, իսկ վերջինը՝ շուտ Պակաս թվով ջուր պիտի ստանան նաև այն հողերը, վորոնց ստորյերկրած ջրերը բարձր են. Տնտեսությունում պակաս ջուր լինելու դեպում առաջին հերթին պիտի ջրել պարարտացրած հողերը։ Ջրելու աշխատանքները պիտի կտարվեն անընդհատ, թե ցերեկ և թե գիշեր, ըստ վորում ջրել թույլատրվում ե միայն մոլախոտերից աղատված հողամասերը։

Յենելով մինչև այժմ ասածներից և հաշվի առնելով հողերի առանձնահատկությունները՝ մեր բամբակացան առանձին շրջաններում կարելի յե սահմանել ջրելու հետեւյալ թիվն ու ժամկետները։

### Մեկ տեղամ ջրվող բամբակը

Առաջին ջուր՝ մազիսի 15-ից մինչև հուլիսի 30-ը

### Յերկու տեղամ ջրվող բամբակը

Առաջին ջուր՝ հունիսի 20-ից մինչև հուլիսի 20-ը  
Յերկրորդ » հուլիսի 16-ից մինչև ոգոստոսի 15-ը  
Լրացուցիչ » ոգոստոսի 16-ից մինչև ոգոստոսի 30-ը

### Յերեք տեղամ ջրվող բամբակը.

Առաջին ջուր՝ հունիսի 15-ից մինչև հուլիսի 10-ը  
Յերկրորդ » հուլիսի 11-ից մինչև ոգոստոսի 5-ը  
Յերրորդ » ոգոստոսի 6-ից մինչև օգոստոսի 25-ը  
Լրացուցիչ » ոգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 8-ը

### Չորս տեղամ ջրվող բամբակը

Առաջին ջուր՝ հունիսի 10-ից մինչև հունիսի 30-ը  
Յերկրորդ » հուլիսի 1-ից մինչև հուլիսի 20-ը  
Յերրորդ » հուլիսի 21-ից մինչև ոգոստոսի 10-ը  
Չորրորդ » ոգոստոսի 11-ից մինչև ոգոստոսի 30-ը  
Լրացուցիչ » ոգոստոսի 21-ից մինչև ոգոստոսի 31-ը

### Հինգ տանգամ ջրվող բամբակը

Առաջին ջուր՝ հունիսի 5-ից մինչև հունիսի 20-ը  
Յերկրորդ » հունիսի 21-ից մինչև հուլիսի 5-ը  
Յերրորդ » հուլիսի 6-ից մինչև հուլիսի 20-ը  
Չորրորդ ջուր՝ հուլիսի 21-ից մինչև ոգոստոսի 5-ը  
Հինգերորդ » ոգոստոսի 6-ից մինչև ոգոստոսի 30-ը  
Լրացուցիչ » ոգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 1-ը

### Վեց տանգամ ջրվող բամբակը

Առաջին ջուր՝ հունիսի 1-ից մինչև հունիսի 15-ը  
Յերկրորդ » հունիսի 16-ից մինչև հունիսի 30-ը  
Յերրորդ » հուլիսի 1-ից մինչև հուլիսի 15-ը  
Չորրորդ » հուլիսի 16-ից մինչև հուլիսի 28-ը  
Հինգերորդ » հուլիսի 29-ից մինչև ոգոստոսի 10-ը  
Վեցերորդ » ոգոստոսի 11-ից մինչև ոգոստոսի 25-ը  
Լրացուցիչ » ոգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 5-ը

### Յոթ տանգամ ջրվող բամբակը

Առաջին ջուր՝ մայիսի 25-ից մինչև հունիսի 10-ը  
Յերկրորդ » հունիսի 11-ից մինչև հունիսի 25-ը  
Յերրորդ » հունիսի 26-ից միչև հուլիսի 10-ը  
Չորրորդ » հուլիսի 11-ից մինչև հուլիսի 22-ը  
Հինգերորդ » հուլիսի 23-ից մինչև ոգոստոսի 5-ը  
Վեցերորդ » ոգոստնսի 6-ից մինչև ոգոստոսի 10-ը  
Յոթերորդ » ոգոստոսի 19-ից մինչև սեպտեմբերի 5-ը  
Լրացուցիչ » սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 15-ը

Վերջին թվերը ցույց են տալիս լրացուցիչ վուոզման ժամկետները և կիրառվելու յեն այն դեպքում, յերբ կնգուղների բացումն սկսվում ե ոգոստոսի 2-ըդ կեսից, նշաններ կան, վոր ըրտերն սկսվելու յեն ուշ (հոկտեմբերի 2-ըդ կեսից ուշ) և յեղանակներն ել տաք ու չոր են: Հենց նման դեպքումն ե, վոր ոգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին բամբակենուն պիտի տալ մի լրացուցիչ ջուր ևս: Այդ ջուրն անհրաժեշտ է յերիտա-

սաբդ կնգուղների կազմակերպման, պտուղների նորմալ դարձացման և հասունացման, ինչպես նաև բույսի կենսական ցիկլը բոլորելու համար։ Այս ջուրը կախում ունի նաև հողալին պայմաններից և կարող է կիրառվել միայն թեթև հողերում։

Հասունացման շրջանում տրվող ջուրն ունի նաև այն նշանակությունը, վոր ապահովում ե բարձր և գլխավոր ցողունից հեռու ընկած ճյուղերի նորմալ դարձացումը և նրանց պաղաքերությունը։ Բարենպաստ տարիներին այդ ուշ առաջացած կը նշուղները կարողանում են հասունանալ և ավելացնել բերքի քանակը, իսկ անբարենպաստ տարիներին դրանք պատճառ են դառնում բերքի անկման, վորովհետև դանդաղեցնում են մյուս կնգուղների բացումը։

Տեղումների պատճառով չպետք է ձգձգել բամբակը ջրելու ժամկետները։

Բոլոր կոլտնտեսություններում, բոլոր սառնաներում և բոլոր հողային տիպերում ջրի միատեսակ թիվ և ժամկետ չի կարելի կիրառել։ Մինչև այժմ մեր ասածները լինելու յեն որիենտիր։ Դրանք շարունակական, քարացած, անփոփոխ թվեր չեն և պետք է փոփոխվեն, կոնկրետացվեն՝ յելնելով տեղի առանձահատուկ պայմաններից։

## ԶՐԻ ՆՈՐՄԱՆ

Կարենը նշանակություն ունի ջրելու ժամանակ նաև ջրի նորման, վորից հաճախ կախված ե արտի հավասարապես խոնավացումը կամ անբավար ջուրը, իսկ դրան իրրե հետեանք ստացվում ե բարձր կամ պակաս բերք։ Նորմաների դերն առանձնապես մեծ նշանակություն ունի մեզ մոտ, ուր բույսի զարգացման ամենավճռական մոմենտներին պակասում ե մեր առուների ջուրը և ավելորդ ծախսված նույնիսկ չնշին քանակությամբ ջուրն աններելի հանցանք և բամբակի համար հողի ամենալավ խոնավությունը հավասար է հողի լրիվ խոնավունակության ժոտավորապես 60—70 տոկոսին, ալդ պատճառով պիտի աշխատել հողի խոնավությունը պաշտպանել դրան մոտ, թեև դա շատ

դժվար ե դաշտալին պայմաններում։ Փորձերը ցույց են տվել, վոր վորքան մեծ լինի ժամանակամիջոցը մեկ ջրից մինչև մյուսը, այնքան ել անբարենպաստ վիճակ կստեղծվի բույսերի զարգացման համար։ Դրան հակառակ՝ հաճախակի և պակաս նորմաններով ջրելք տալիս ե բերքի հավելում։

Սակայն ջրի նորմաներն իջեցնել և ջրելու թիվը ավելացնել կարելի յե մինչև վորոշ չափի, վորից հետո ստացվում ե բացասական հետևանք նախ այն պատճառով, որը հարավորություն չի լինում հողի հավասարապես խռնավացումը կատարել է, բացի այդ, հաճախակի ջրելը փշացնում է հողի ֆիզիկական դրությունը։ Ասածից պարզ է, վոր սերտ կապ կոյություն պիտի ունենա նորմայի և ջրելու թվի միջև, վորը և պետք ե գտնել վորձերի միջոցով ու կոնկրետացնել առանձին պայմանների համար։

Վերջացնելով ցանքերի խնամքին վերաբերյալ աշխատանքների նկարագրությունը՝ անհրաժեշտ է մի անգամ ևս շեշտել, վոր քաղհանը, կուլտիվացիան, ջուրը և նոսրացումը սերատուն կապված են միմյանց հետ։ Բոլորը միասին կազմում են ձեռնարկումների ամբողջական սիստեմ, աշխատանքների կոմպլեքս, վորոնց ռացիոնալ և կապակցված դասավորությամբ միայն հնարավոր ե ապահովել այդ ձեռնարկումների մաքսիմալ եֆեկտը, բերքատվության մաքսիմալ բարձրացումը։

Հեղի. Խմբ.՝ Ար. Պր ի գորյան  
Սրբագրիչ Գար. Հակոբյան


Պլավլիտի լիազօր 0—493, հրատ. № 336, պատվ. № 280, տիրաժ 1000

Հանձնված ե արագակրության աղբեկի 23.ին 1936 թ.

Ստորագրված և տպագրելու մայիսի 4.ին 1936 թ.

21/4 տպ., թերթ՝ մեկ տպ. թերթում 38400 տպ. № 2.

Գյուղհետակ տպարան, Յերեան, Նալբանդյան 11



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008647

60 կոդ.

374

A 18433



БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА

Г. АГАДЖАНИЯН

ХЛОПОК

СЕЛЬХОЗГИЗ

1936

ЭРИВАНЬ